Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

2018 թվականի փետրվարի 19-ից 21-ը քաղաք Հայդարաբադ գործուղման վերաբերյալ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

  Արման Խաչատրյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Հնդկաստան՝ քաղաք Հայդարաբադ, 2018թ. փետրվարի 19-ից 21-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

  Ծրագրային ծառայություններ մատուցող ընկերությունների ազգային ասոցիացիա (NASSCOM):

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

  Մասնակցություն Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսին:

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վ. Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590001, էլ. փոստ՝ minister@mtcit.am

♦ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

2018թ. փետրվարի 19-ից 21-ը Հնդկաստանի Հայդարաբադ քաղաքում կայացել է Տեղեկատվական Տեխնոլոգիաների Համաշխարհային Կոնգրես 2018-ը (WCIT 2018), որին մասնակցել է նաև ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Արման Խաչատրյանի գլխավորած պատվիրակությունը:

WCIT-ը հանդիսանում է տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների բնագավառում խոշորագույն միջազգային մակարդակի համաժողով, որը յուրաքանչյուր տարի անց է կացվում տարբեր երկրներում՝ Համաշխարհային տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների դաշինքի (WITSA) աջակցությամբ:

Այս տարի 22-րդ WCIT-ը հյուրնկալվել է Հնդկաստանի կառավարության կողմից և անցկացվել է մեկ այլ խոշոր միջոցառման՝ Առաջնորդների հնդկական համաժողովի (LIF) հետ համատեղ:

Վերջինս հարթակ է հանդիսանում նորարարական գաղափարների, բիզնես-ռազմավարության մշակման և հանրության ապագայի կերտման համար:

WCIT 2018-ի բացմանը առցանց ողջույնով հանդես է եկել Հնդկաստանի վարչապետը, ներկա են գտնվել մի շարք երկրների կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը համակարգող նախարարներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը ներկայացնող կազմակերպությունների ղեկավարներ:

Միջոցառման շրջանակներում անցկացվել են եռօրյա քննարկումներ, բանակցություններ, նախարարական ծրագիր, բարձրաստիճան գագաթաժողով և ֆորում, միջազգային ցուցահանդեսներ:

Միջոցառման ընթացքում ներկայացվել է Հայաստանի ՏՏ ոլորտի ներկա վիճակն ու զարգացման նախադրյալները:

Հայկական պատվիրակության կազմում ընդգրկված են եղել նաև Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության, «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»-ի, «ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ»-ի, «ՅՈՒՔՈՄ»-ի, «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ»-ի, <<ԻՆՍՏԻԳԵՅԹ ՄՈԲԱՅԼ>>-ի, <<ՎՕԼՕ>>-ի, <<ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ>>-ի, ինչպես նաև հայկական այլ հեռահաղորդակցական ընկերությունների ներկայացուցիչները:

Միջոցառման հիմնական թեման է եղել թվային փոխակերպումը, որը ներկայումս հանդիսանում է տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների բնագավառի առավել արդիական հարցերից մեկը:

Քննարկվել է բնագավառի վերջին թրենդների և նորարարական տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունները՝ ավելի լավ թվային աշխարհ կառուցելու նպատակով:

Միջոցառման շրջանակներում տեղի են ունեցել քննարկումներ թվայնացման առանցքների, թվային տնտեսության զարգացման և խթանման, հասարակության վրա թվայնացման գործընթացի ազդեցության, թվային փոխակերպման, կայուն թվային ապագայի կառուցման, նորարարական տեխնոլոգիաների, ինտելեկտուալ մեքենաների, ռիսկերից և վտանգներից տեղեկատվության ապահովագրման թեմաներով, ինչպես նաև քննարկվել են նշված բնագավառերում աշխատատեղերի ստեղծման և ավելացման խնդիրները և դրա ապահովմանն ուղղված քայլերը:

Երկկողմ հանդիպումների շրջանակներում ԻՏԶՄ-ի և Հնդկաստանի Lexicon PR Management Service-ի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, ըստ որի՝ հայկական «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների փորձնական ծրագիրը կներդրվի նաև Հնդկաստանի դպրոցներում:

ԻՏԶ միության նախագահը WCIT 2018-ի կազմակերպիչ Տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների համաշխարհային ալյանսի (World Information Technology and Services Alliance-WITSA) կողմից ընտրվել է «WITSA» Տնօրենների խորհրդի անդամ:

Կոնգրեսի արդյունքում համագործակցության եզրեր են ձևավորվել նաև ASOCIO-ի (The Asian-Oceanian Computing Industry Organization) հետ, որը Ճապոնիայում հիմնադրված կազմակերպություն է և ներառում է ՏՀՏ ու բիզնես ոլորտի 24 երկրների կազմակերպություններ:

♦ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Արման Խաչատրյանը երկկողմ հանդիպումներ է ունեցել.

1. Հնդկաստանի իրավունքի, արդարադատության և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Ռավի Պրասադի հետ,
2. Բանգլադեշի տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Զունաիդ Պալակի հետ,
3. Հնդկաստանի Տելանգանա նահանգի տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Տարակա Ռաոյի հետ,
4. Շվեդիայի կրթության և գիտության պետական քարտուղար Կարին Ռոդինգի հետ
5. «Ադոբ» ընկերության նախագահ և գործադիր տնօրեն Շանտանու Նարեյնայի հետ:

♦ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համաժողովի ավարտին էստաֆետը փոխանցվել է Հայաստանին, համաձայն որի՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրես 2019-ը (WCIT 2019) անցկացվելու է Հայաստանի Հանրապետությունում:

♦ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արման Խաչատրյան **23.02.2018թ.**